



Երևան քաղաքի Տնային
Տնտեսությունների շրջանում Կանաչ քաղաքի
հայեցակարգի վերաբերյալ հետազոտություն

ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ



*Empowered lives.
Resilient nations.*

Հիմնական հետազոտական խումբ

Արամ Նավասարդյան (Ղեկավար)

Գայանե Դաջունց

Արտահայտված կարծիքները և եզրահանգումները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ՀՀ որևէ պետական մարմնի, Երևանի քաղաքապետարանի կամ ՄԱԿ-ի առանձին կառույցների պաշտոնական տեսակետների և կամ դիրքորոշումների հետ:



*Empowered lives.
Resilient nations.*



YEREVAN
MUNICIPALITY



© «Էմ Փի Զի» ՍՊԸ, 2018թ.

Օգտագործված հապավումները

ԳԷՖ	Գլոբալ Էկոլոգիական Ֆոնդ
ՀՀ ԱՎԾ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՄԱԶԾ	Միավորված ազգերի զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՏՏ	Տնային Տնտեսություն
ՎՇ	Վարչական Շրջան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<u>Ամփոփագիր</u>	<u>3</u>
<u>1. Ներածություն</u>	<u>10</u>
<u>2. Հետազոտության մեթոդաբանությունը</u>	<u>12</u>
<u>3. Տնային տնտեսությունները և բնակարանային պայմանները</u>	<u>15</u>
<u>3.1. Բազմաբնակարան շենքերի վիճակ</u>	<u>15</u>
<u>3.2. Բազմաբնակարան շենքերի կառավարում</u>	<u>21</u>
<u>4. Ջեռուցում, Էլեկտրական սարքավորումներ</u>	<u>30</u>
<u>4.1. Ջեռուցումը տնային տնտեսություններում</u>	<u>30</u>
<u>4.2. Էլեկտրական սարքավորումներ, Էներգաարդյունավետության խնդիրներ</u>	<u>34</u>
<u>4.3. Այլընտրանքային Էներգիայի աղբյուրները. Ֆինանսական մասնակցության պատրաստակամությունը</u>	<u>35</u>
<u>4.4. Լուսավորության կազմակերպումը SS-ներում</u>	<u>40</u>
<u>5. Քաղաքային ծառայություններ</u>	<u>46</u>
<u>5.1. Հասարակական տրանսպորտ</u>	<u>46</u>
<u>5.2. Երևան քաղաքի լուսավորությունը, սանմաքրում</u>	<u>51</u>
<u>5.3. Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող ծառայությունները</u>	<u>54</u>
<u>Հավելված 1. Վերլուծական աղյուսակներ</u>	<u>63</u>

Ամփոփագիր

Երևանի քաղաքապետարանի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից իրականացվող «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագիրը, որը ֆինանսավորված է Գլոբալ էկոլոգիական ֆոնդի կողմից, ուղղված է նպաստելու քաղաքային լուսավորության էներգաարդյունավետության բարձրացմանը և դրանով ջերմոցային գազերի արտանետումները կրճատմանը: Այս ծրագրի շրջանակներում Երևանի մի շարք փողոցներում տեղադրվել են արդիական էներգաարդյունավետ լուսադիոդային լուսատուներ: Բացի էլեկտրաէներգիայի սպառման և սպասարկման խնայողությունից, այս միջոցով կրճատվում են ջերմոցային գազերի արտանետումները: Այս ծրագրի իրականացման վերջնարդյունքը քաղաքային լուսավորության արդի համակարգ ունենալն է: Սույն հետազոտությունն իրականացվել է վերոնշյալ ծրագրի շրջանակներում, սակայն խնդիր ունենալով գնահատել կանաչ քաղաքի, կանաչ տնտեսության հետ կապված և քաղաքային ծառայությունների վերաբերյալ բնակչության կարծիքը: Հետազոտության պատվիրատուն է ՄԱԶԾ-ն: Հետազոտությունը համաֆինանսավորված է Երևանի քաղաքապետարանի և ԳԷՖ-ի կողմից:

Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսացել Երևան քաղաքի բնակչության կողմից էներգիայի սպառման, շենքերի կառավարման հիմնախնդիրների և ոլորտին առնչվող այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության ստացումը, որոնք հիմք կծառայեն էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականության և ներդրումային առաջարկությունների մշակման համար: Հետազոտությունն իրականացվել է 2018թ.-ի փետրվար-մարտ ամիսներին:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Երևան քաղաքի 2098 տնային տնտեսություններ:

✚ Այս վերլուծական հաշվետվությունը հիմնվում է ՏՏ-ների ընտրանքային հետազոտության արդյունքների վրա և նկարագրում է Երևանի ՏՏ-ների կողմից էներգիայի սպառման, շենքերի կառավարման հիմնախնդիրների և ոլորտին առնչվող այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք հիմք կծառայեն էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականության և ներդրումային առաջարկությունների մշակման համար:

✚ Բազմաբնակարան շենքերի ընդհանուր վիճակի վերաբերյալ ստացված արդյունքները հետևյալն են.

- Համաձայն հետազոտության արդյունքների գրեթե բոլոր ՎՇ-երում բազմաբնակարան շենքերի մուտքերի դռները հիմնականում տեղադրված են (ընդհանուր 68%), իսկ պատուհանները տեղադրված են ոչ ամբողջական (ամբողջական տեղադրված պատուհանները՝ ընդհանուր 34,6%), ինչը բերում է էներգիայի կորստի:

- Բազմաբնակարան շենքերի մուտքերի միայն 1/3-է լուսավորված :
- Գրեթե բոլոր բազմաբնակարան շենքերում առկա են վերելակներ, սակայն ընդհանուր առմամբ հարցվողների կեսից ավելին (54,2%) նշել է, որ վերելակն աշխատում է խափանումներով:
- ✚ Բազմաբնակարան շենքերի կառավարմանը առնչվող խնդիրների վերաբերյալ ստացվել են հետևյալ արդյունքները.
 - բնակիչների կեսից ավելին (58,5%) տեղեկացված է, թե ով է հանդիսանում շենքի կառավարող մարմինը, սակայն ցածր է կառավարող մարմնի գործառնությունների վերաբերյալ հարցվողների իրազեկվածության մակարդակը (7,5%-ը լիովին է տեղեկացված, 24%-ը՝ ավելի շուտ է տեղեկացված),
 - կառավարող մարմնի կողմից վերջին 3 տարիների ընթացքում որպես հիմնական իրականացված աշխատանք նշվել է տարածքի մաքրումը (71,3%), բակային տարածքի լուսավորությունը (51,6%), վերելակների նորոգումը (20,2%), մուտքերի վերանորոգումը (29,2%):
 - միայն 7,6%-ն է նշել, որ համատիրությունը սեփականատերերին տեղեկացնում է նախատեսվող աշխատանքների մասին: Այս մասին է վկայում նաև համատիրության ժողովներին բնակիչների մասնակցության ցածր մակարդակը: Հարցվողների մեծամասնությունը (70,1%) չի մասնակցում ժողովներին, քանի որ տեղեկացված չէ ժողովների մասին, որը խոսում է համատիրություն-սեփականատեր կապի թերի լինելու մասին:
 - որպես կառավարող մարմնի աշխատանքների մասին ցանկալի տեղեկատվության աղբյուրներ նշվել է շենքերում փակցված հայտարարություններն (46,4%), ինչպես նաև հանդիպումների կազմակերպումը բնակիչների հետ (30,2%)
 - հարցվողների կեսից ավելին տեղյակ է, թե որքան գումար է վճարում շենքի պահպանման և այլ մատուցվող ծառայությունների համար, սակայն քչերը գիտեն այդ վճարի հաշվարկման եղանակի մասին (24,3%): Հարցվողների մեծամասնությունը տեղեկացված չէ, թե այդ գումարները ինչ նպատակով են ծախսվում (82,6%):
 - որպես առաջնային լուծում պահանջող աշխատանքներ նշվել է շենքերի մաքրությունը (46,2%), մուտքերի վերանորոգումը (39,6%) ու լուսավորումը (29,9%):
- ✚ Բնակարանային պայմանների վերաբերյալ արդյունքները ներկայացված են ստորև.
 - Հարցված SS-ների կեսից ավելիի դեպքում (66,8%) տան պատուհանները կամ ամբողջությամբ կամ մասամբ փոխարինված են եվրոպատուհաններով:
 - Երևանում ջեռուցման համար կիրառվող հիմնական տարբերակը բնական գազն է (70,7%): Գրեթե նույն ցուցանիշն է արձանագրվել 2015թ.1 հանրապետության

¹ http://nature-ic.am/Content/announcements/7150/EDRC-UNDP-Energy-Consumption-Survey-2015_arm.pdf

բնակելի հատվածում էներգիայի սպառման հետազոտության արդյունքներում՝ 72%: Էլեկտրաէներգիան որպես ջեռուցման հիմնական միջոց կիրառվում է հարցված SS-ների 25%-ի դեպքում: Բնական գազի միջոցով ջեռուցումը հիմնականում կազմակերպվում է անհատական ջեռուցման կաթսաների միջոցով՝ (53,8%) և գազի վառարանների միջոցով՝ 22,4%: Էլեկտրաէներգիայով ջեռուցման կազմակերպման հիմնական միջոցը էլեկտրական սարքավորումներն են, ջեռուցիչները՝ 17,8%:

- 2017-2018թթ. ջեռուցման սեզոնին հարցված SS-ների մեծամասնությունը (84,9%) կարողացել է ապահովել միջինում 17 աստիճանից բարձր ջերմաստիճան բավարարված է եղել բնակարանի ջերմաստիճանով:
- Ջեռուցման վրա ծախսվող գումարները էականորեն տարբերվում են 2017-2018թթ. համեմատաբար մեղմ ձմեռվա ջեռուցման սեզոնի և 2016-2017 թթ.-ի համար: Եթե 2016-2017թթ.-ին SS-ների 22,0%-ը ծախսել 50001-80000 դրամ ջեռուցման համար, ապա՝ 2017-2018թթ.-ին միայն 9,8%-ն է ծախսել 50,001-80,000 դրամ: Հարցվողների կեսից ավելին 2017-2018թթ.-ին ամսական կտրվածքով ծախսել են մինչև 30,000 դրամ ջեռուցումը կազմակերպելու համար:
- Հարցված SS-ների կեսից ավելին էլեկտրատեխնիկա գնելիս ուշադրություն չի դարձնում Էներգաարդյունավետության ABC դասակարգմանը: Հարցվողների մոտ 1/5-րդը տեղյակ չէ այդ դասակարգման մասին:

✚ Այլընտրանքային էներգիայի աղբյուրների վերաբերյալ բնակիչների կարծիքը հետևյալն է.

- Հարցվողների մեծամասնությունը կողմ է այլընտրանքային էներգիայի աղբյուրներին: Մասնավորապես մեծամասնությունը կողմ է արտահայտվել շենքի տանիքում ֆոտովոլտային համակարգի տեղադրմանը, իսկ վճարելու պատրաստակամություն հայտնել է միայն 31,3%-ը: Բացի այդ հարցվողները ցածր տեղեկացվածության պատճառով դժվարանում են գումարի կոնկրետ չափ նշել (11,1%), կամ նշում են ամսական կտրվածքով մինչև 10,000 դրամ (74,5%):
- Շենքի պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման համար գումար տրամադրելու պատրաստակամություն հայտնել է հարցվողների 28,8%-ը: Հիմնական կոնստրուկցիաների պատերի համար (56,4%) ու պատուհանների (40,9%): Այս դեպքում ևս մեծամասնությունը պատրաստ է գումար ներդնել մինչև 10,000 դրամի չափով (48,6%):

✚ Բնակարանների լուսավորության կազմակերպման արդյունքները հետևյալն են.

- Եթե 2015թ.1 էներգիայի սպառման հետազոտության տվյալներով լուսադիոդային լամպեր Երևան քաղաքում օգտագործում էին հարցված SS-ների 5,4%-ում, ապա համաձայն սույն հետազոտության արդյունքների այդ թիվը բավականին աճել է դառնալով 22,8%:

- Ինչպես 2015թ. հետազոտության արդյունքների, այնպես էլ այս դեպքում լուսադիտողային լամպեր չկիրառելու հիմնական պատճառը ֆինանսական անմատչելիությունն է, այնուհետև տեղեկացվածության ցածր մակարդակը:
- Հարցվողները լուսադիտողային լամպերի վերաբերյալ ինֆորմացիայի ստացման աղբյուր մատնանշում են ոչ ֆորմալ աղբյուրները՝ մասնավորապես առաջնահերթ բարեկամներ, ընկերներ, շրջապատ ծանոթներ (44,8%), այնուհետև վաճառասրահներից ստացված տեղեկատվությունը՝ (21,4%):
- ✚ Հարցերի մյուս համախումբը բացահայտել է երևանցիների կարծիքը քաղաքային ծառայությունների վերաբերյալ
 - Հարցվողները բավականին ցածր են գնահատում ներկա հասարակական տրանսպորտի վիճակը: Առավել ցածր գնահատական են ստացել երթուղային տաքսիները:
 - Երևանցիների մոտավորապես մեկ երրորդն է օգտվում վերգետնյա էլեկտրատրանսպորտից /տրոլեյբուսից/, որոնցից 16%-ը ամիսը մեկ անգամ, իսկ մյուսներն ավելի հաճախ: Վերգետնյա էլեկտրատրանսպորտից չօգտվելու հիմնական պատճառը հարմար երթուղու բացակայությունն է (47,4%):
 - Երևանցիների մոտ 40%-ն օգտվում է ստորգետնյա էլեկտրատրանսպորտից /մետրոյից/, իսկ չօգտվելու հիմնական պատճառը ՎՇ-ում մետրոյի կայարանի բացակայությունն է՝ 52,9%:
 - Հարցվողների մեծամասնությունը դրական է վերաբերվում Երևան քաղաքում էլեկտրատրանսպորտի զարգացումը (87,6%)՝ համարելով, որ էլեկտրատրանսպորտը էկոլոգիապես ավելի մաքուր է քաղաքի համար:
 - Երևանցիները միջինից բարձր են գնահատում Երևան քաղաքի ընդհանուր լուսավորությունը (1-ից 5 բալային սանդղակով գնահատելով 3,8 բալ), սակայն ցածր են գնահատել բակային լուսավորությունը: Ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է Ավան ՎՇ-ում, ամենացածր ցուցանիշը՝ Նուբարաշեն և Էրեբունի ՎՇ-երում:
 - Դրական փոփոխություններ են արձանագրվել քաղաքի աղբահանության և մաքրության ոլորտում: Հարցվողների կեսից ավելին նշել է, որ թե աղբահանության (63,8%), թե մաքրության վիճակը (52,6%) վերջին տարիների ընթացքում բարելավվել է:
 - Հարցվողների մեծամասնությունը տեղյակ է (87,5%), որ Երևանի քաղաքապետարանում գործում է Թեժ գծի ծառայություն
 - Երևանի քաղաքապետարանի կայքում գործող էլեկտրոնային ծառայություններից հարցվողներն առավել տեղեկացված են «Վճարովի ավտոկայանատեղերի իրավախախտումների վերաբերյալ ինֆորմացիայի ստացում պետհամարանիշներով»՝ 21,1%, առավել քիչ տեղեկացված են՝ «Երևանի ինտերակտիվ բյուջե» ծառայությունից՝ 6,1%:

- Երևանի քաղաքապետարանի կողմից իրականացվող սոցիալական աջակցության և առողջապահական ծրագրերից հարցվողների մոտ առավել հայտնի ծրագիրը “Պոլիկլինիկաներում անվճար ծառայությունների տրամադրում”-ն է՝ 60,7% և «Սահմանամերձ գոտիներում և Արցախում երևանաբնակ զինծառայող զավակներին ծնողների անվճար այցելությունների կազմակերպում»-ը՝ 58,7%:
- Երևան քաղաքի խորհրդանիշները ըստ հարցվողների Հանրապետության հրապարակն է՝ 33,9%-ը, Օպերայի և Բալետի շենքը՝ 28,9%-ը, Կասկադը՝ 15,8%-ը:
- Երևանի 2800 ամյակին նվիրված միջոցառումների ցանկում հարցվողների 17,7%-ը ցանկանում է տեսնել համերգային ծրագրեր, 7,5%-ը՝ երեխաներին ուղղված ծրագրեր, 6,8%-ը՝ կանաչապատում, ծառատունկ, 6,4%-ը՝ սոցիալական ծրագրեր անապահով ընտանիքներին: Հարցվողների 5,1%-ը նշել է, որ ցանկանում է որպեսզի միջոցառումներ լինեն քաղաքի բոլոր հատվածներում, ոչ միայն կենտրոնում:

1. Ներածություն

ՄԱԿ-Ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից ուշադրության արժանացած ուղղություններից մեկը «Շրջակա միջավայր և էներգետիկա»-ն է: Այս ծրագրի գործունեության հիմնական ուղղություններն են վերականգնվող էներգիայի և էներգաարդյունավետության խթանման նպատակով կանոնակարգող դաշտի ստեղծումը, կլիմայի փոփոխության տեղական ազդեցությունների կրճատումը, կանաչ քաղաքաշինության և հողերի կայուն կառավարման խթանումը, ինչպես նաև աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարության իրականացումը:

Երևանի քաղաքապետարանի, ՄԱԶԾ ու ԳԷՖ-ի համատեղ «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում «Էմ Փի Ջի» ՍՊԸ-ի կողմից իրականացվել է հետազոտություն, որի հիմնական նպատակն է հանդիսացել Երևան քաղաքի բնակչության կողմից էներգիայի սպառման, շենքերի կառավարման հիմնախնդիրների և ոլորտին առնչվող այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության ստացումը, որոնք հիմք կծառայեն էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականության և ներդրումային առաջարկությունների մշակման համար: Հետազոտությունն իրականացվել է 2018թ.-ի փետրվար-մարտ ամիսներին:

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Երևան քաղաքի 2,098 տնային տնտեսություններ: Հաշվի առնելով հետազոտության նպատակները և պահանջները, իրականացվել է ներկայացուցչական ընտրանք ըստ Երևան քաղաքի ՎՇ-երի: Հետազոտությունն իրականացվել է Երևան քաղաքի բոլոր 12 ՎՇ-երում: Հարցումների համամասնությունը համապատասխանում է Երևան քաղաքի տնային տնտեսությունների բաշխվածությանը:

Սույն հաշվետվությունը վերոնշյալ հետազոտության ավարտական հաշվետվությունն է, որը կազմված է 5 բաժիններից:

Ներածության հաջորդող բաժնում ներկայացված է հետազոտության մեթոդաբանությունը:

Հաշվետվության 3-րդ բաժնում ներկայացված են ՏՏ-ների և բնակարանային պայմանների վերաբերյալ մանրամասներ: Այս բաժնում մանրամասն նկարագրված են բազմաբնակարան շենքերի վիճակը, բազմաբնակարան շենքերի կառավարման վերաբերյալ մի շարք հիմնախնդիրներ:

Հաշվետվության 4-րդ բաժնում քննարկվում է ՏՏ-ների ջեռուցման վերաբերյալ հարցադրումներ, ինչպես նաև էլեկտրական սարքավորումների, էներգաարդյունավետության վերաբերյալ հարցեր: Այս բաժնում նաև անդրադարձ է կատարվել այլընտրանքային էներգիայի աղբյուրներին, ինչպես նաև հարցվողների ֆինանսական մասնակցության պատրաստակամությանը: Բացի այդ քննարկվում է, թե ինչպես են ՏՏ-ներում կազմակերպում լուսավորությունը:


Հաշվետվության 5-րդ բաժնում քննարկվում են քաղաքային ծառայությունները, մասնավորապես հասարակական տրանսպորտի, քաղաքի լուսավորության, սանմաքրման և

Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ մի շարք հարցեր:

2. Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել են Երևան քաղաքի 2098 ՏՏ-ներ: Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսացել Երևան քաղաքի բնակչության կողմից էներգիայի սպառման, շենքերի կառավարման հիմնախնդիրների և ոլորտին առնչվող այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության ստացումը, կանաչ տնտեսության և քաղաքայի ծառայությունների վերաբերյալ բնակչության կարծիքը: Ստացված ինֆորմացիան հիմք կծառայի էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականության և ներդրումային առաջարկությունների մշակման համար:

Հաշվի առնելով հետազոտության նպատակները և պահանջները, իրականացվել է ներկայացուցչական ընտրանք ըստ Երևան քաղաքի ՎՇ-երի: Հետազոտությունն իրականացվել է Երևան քաղաքի բոլոր 12 ՎՇ-երում: Հարցումների համամասնությունը համապատասխանում է Երևան քաղաքի ՏՏ-ների բաշխվածությանը:



Գլխավոր համախմբությունը տարանջատվել է ըստ հետևյալ կլաստերների.

- ✚ Վարչական շրջան
- ✚ Բնակելի տան տեսակ

Գլխավոր համախմբության վերաբերյալ ինֆորմացիայի աղբյուր է հանդիսացել «ՀՀ 2011թ. բնակչության մարդահամարի արդյունքները»²: Ընտրանքի փաստացի բաշխվածությունը հետևյալն է.

Աղյուսակ 1. SS քանակը ըստ Երևան քաղաքի ՎՇ-երի և ըստ Բազմաբնակարան շենքերի և առանձնատների

	Բազմաբնակարան շենք	Առանձնատուն	Ընդհանուր
Աջափնյակ	205	3	208
Ավան	70	9	79
Արաբկիր	224	10	234
Դավթաշեն	60	4	64
Էրեբունի	164	50	214
Կենտրոն	200	48	248
Մալաթիա Մեքաստիա	220	86	306
Նոր Նորք	265	3	268
Շենգավիթ	231	37	268
Քանաքեռ Զեյթուն	125	21	146
Նորք Մարաշ	0	31	31
Նուբարաշեն	26	6	32
Ընդհանուր	1790	308	2098

Դաշտային աշխատանքներ: Հետազոտությունն իրականացվել է դեմ առ դեմ հարցումների մեթոդով, պատասխանները ներմուծվել են պլանշետների միջոցով: Մեկ հարցման միջին տևողությունը կազմել է 30 րոպե: Հետազոտության գործիքը՝ հարցաթերթը մշակվել ՄԱԶԾ մասնագետների հետ համատեղ և վերջնական հաստատվել ՄԱԶԾ մասնագետների կողմից:

Հարցաթերթն իր մեջ ներառում է 7 բաժին:

Նախքան բուն դաշտային աշխատանքների սկսելը իրականացվել է հարցազրուցավարների հրահանգավորում, որին ներկա են գտնվել պատվիրատուն, ինչպես նաև հարցաթերթի փորձարկում: Իրականացվել է 30 փորձնական հարցում, որի արդյունքում պատվիրատուի և «Էմ Փի Զի» ընկերության մասնագետների համատեղ քննարկումից հետո հարցաթերթում կատարվել են որոշակի փոփոխություններ:

Հարցումն իրականացվել է 25 հարցազրուցավարների կողմից:

² http://www.armstat.am/file/article/sv_06_16a_5250.pdf,

<https://www.yerevan.am/uploads/media/default/0001/13/a61310fd090df40c3779883fe972c9dca35cf066.pdf>

Բազմաբնակարան շենքերում երթուղին մշակվել է այնպես, որպեսզի ընտրանքի մեջ ներառվեն թե առաջին, թե միջին և թե բարձր հարկերում գտնվող տնային տնտեսությունները:


Դաշտային աշխատանքների ստուգումն իրականացվել է դաշտային աշխատանքների ընթացքում:

3. Տնային տնտեսությունները և բնակարանային պայմանները

3.1. Բազմաբնակարան շենքերի վիճակ

Հետազոտության ընթացքում հարցումների 85,3%-ը իրականացվել է բազմաբնակարան շենքերում, 14,7%-ը՝ առանձնատներում: Այս բաշխվածությունը համապատասխանում է Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված բաշխվածությանը³:


Գծապատկեր 1. Շինության տեսակը



Հարցումների 35,5%-ը իրականացվել է մինչև 5 հարկ ունեցող շենքերում, 45,1%-ը 6-9-հարկանի շենքերում, 19,3% -ը 10 և ավելի բարձր հարկեր ունեցող շենքերում: Հաշվի առնելով տարբեր հարկերում բնակվող ՏՏ-ների առանձնահատկությունները, հետազոտության ընթացքում քայլերը մշակվել են այնպես, որպեսզի տարբեր հարկերում բնակվող ՏՏ-ները մասնակցեն հետազոտությանը:

Համաձայն Գծապատկեր 2-ի, բազմաբնակարան շենքերում հարցված ՏՏ-ների 35,3%-ը գտնվում է մինչև 3-րդ հարկում, 28,4%-ը՝ 4-5 հարկերում, 28,4%-ը 6-9-րդ հարկում, 8,0% -ը 10 և ավելի բարձր հարկերում:


Գծապատկեր 2. Շենքի հարկայնությունը. Հարկը, որտեղ գտնվում է բնակարանը



³ <https://www.yerevan.am/uploads/media/default/0001/13/a61310fd090df40c3779883fe972c9dca35cf066.pdf>


Գծապատկեր 3-ում ներկայացված է, շենքի, տան պատերի հիմնական նյութը ըստ բազմաբնակարան շենքի և առանձնատների: Առանձնատների մեծամասնության՝ 90,9%-ի դեպքում պատերի հիմնական նյութը քարն է, բազմաբնակարան շենքերի 35,5%-ի դեպքում քար, 61,6%-ի դեպքում՝ մոնոլիտ:

Գծապատկեր 3. Շենքի, տան պատերի հիմնական նյութը




Ըստ Գծապատկեր 4-ի, հարցված ՏՏ-ների 11,0%-ը ունի 1 սենյակ, 28,8%-ը՝ 2 սենյակ, 41,5%-ը՝ 3 սենյակ, 11,0%-ը՝ 4 սենյակ, 7,7%-ը՝ 5 և ավելի սենյակներ:

Գծապատկեր 4. Տան սենյակների քանակը




Գծապատկեր 5-ում ներկայացված է բազմաբնակարան շենքերի մուտքերի պատուհանների վիճակը ըստ ք. Երևանի ՎՇ-երի: Ինչպես տեսնում ենք Արաբկիր ՎՇ-ում հարցվածների 52,2%-ը նշել է, որ պատուհանները ամբողջությամբ են տեղադրված, Աջափնյակ ՎՇ-ում՝ 33,2%-ը նշել է որ պատուհանները տեղադրված չեն: Ընդհանուր առմամբ Երևան քաղաքում հարցվողների 34,6%-ը նշել է, որ պատուհանները տեղադրված են ամբողջությամբ, 32,6%-ը նշել է, որ տեղադրված են մասնակի, 23,9%-ը նշել է, որ տեղադրված չեն ընդհանրապես:

Գծապատկեր 5. Շենքի պատուհանների վիճակը




Ըստ հետազոտության արդյունքների, հարցվողների 68,0%-ը նշել է, որ շենքում մուտքի դռները տեղադրված են ամբողջությամբ, 20,8%-ը նշել է, որ մուտքի դռները տեղադրված են մասնակի:

Գծապատկեր 6. Շենքի մուտքի դռան/դռների վիճակը




Համաձայն հետազոտության, մինչև 5 հարկանի շենքերի միայն 3,6%-ում է առկա վերելակ, 6-9 հարկանի շենքերի 96,7%-ում, 10 և ավելի հարկ ունեցող բոլոր շենքերում առկա է վերելակ:

Գծապատկեր 7. Վերելակի առկայությունը



Այն շենքերում, որտեղ կա վերելակ, պարզվել է արդյոք սարքին են թե ոչ: Գծապատկեր 8-ում արդյունքները ներկայացված են ըստ ՎՇ-երի: Համաձայն գծապատկերի առավել բարվոք վիճակում է գտնվում Մալաթիա Սեբաստիա ՎՇ-ն, որտեղ հարցվողների 60,3%-ը նշել է, որ վերելակը սարքին է, առավել վատ վիճակ է արձանագրվել Նուբարաշեն և Էրեբունի ՎՇ-երում, որտեղ միայն համապատասխանաբար 16,7% և 22,0%-ն է նշել, որ սարքին է: Դիտարկելով ընդհանուր պատկերը, կարելի է առանձնացնել համընդհանուր խնդիր, քանի որ հարցվողների 54,2%-ը նշել է, որ վերելակը աշխատում է խափանումներով:


Գծապատկեր 8. Վերելակի աշխատանքը



Շենքի մուտքի լուսավորության վերաբերյալ՝ ընդհանուր առմամբ Երևան քաղաքում մուտքերի 35,0%-ը ամբողջովին է լուսավորված է, 42,0%-ը՝ մասամբ, իսկ 23,0%-ը՝ ընդհանրապես լուսավորված չէ: Ըստ Գծապատկեր 9-ի առավել բարձր ցուցանիշ է Ավան ՎՇ-


ում, որտեղ հարցվողների 62,2%-ը նշել են, որ մուտքը ամբողջովին լուսավորված է: Առավել ցածր ցուցանիշներ գրանցվել են Էրեբունի և Նուբարաշեն ՎՇ-երում՝ 16,5% և 19,2%: Հարկ է նշել, որ Նուբարաշեն ՎՇ-ի հարցվողների 73,1%-ը նշել է, որ մուտքն ընդհանրապես լուսավորված չէ:

Գծապատկեր 9. Մուտքի լուսավորությունը




Համաձայն Գծապատկեր 10-ի հարցված բոլոր ՏՏ-ների 48,2%-ի բոլոր պատուհանները եվրոպատուհաններ են, 18,6%-ի դեպքում մասամբ են եվրոպատուհաններ, 33%-ի դեպքում սովորական փայտե պատուհաններ են: Հարկ է նշել, որ արտահայտված տարբերություններ ըստ ՎՇ-երի չի նկատվում:

Գծապատկեր 10. Տան պատուհանների տիպը



Բազմաբնակարան շենքերում պարզվել է, թե շենքում որ հատվածներն ունեն վերանորոգման կարիք: Համաձայն Գծապատկեր 11-ի: Հարցվողների 65,2%-ը նշել են շքամուտքեր, 58,4%-ը՝ աստիճանավանդակներ, 59,3%-ը՝ լուսավորության համակարգ, 42,1%-ը՝ վերելակ, 31,1%-ը նշել է տանիք: Հարկ է նշել, որ տանիքի հետ կապված հացվողների 41,6% -ը դժվարացել են պատասխանել, քանի որ տեղյակ չեն թե ինչ վիճակում է գտնվում իրենց շենքի տանիքը:


Գծապատկեր 11. Շենքում վերանորոգման կարիք ունեցող հատվածները



3.2. Բազմաբնակարան շենքերի կառավարում


Սույն բաժնում ներկայացված հարցերը տրվել են միայն բազմաբնակարան շենքերում բնակվող հարցվողներին: Համաձայն Գծապատկեր 12-ի ամենաբարձր տեղեկացվածությունը, թե ով է կառավարում բազմաբնակարան շենքը, Դավթաշեն ՎՇ-ում է՝ 88,6%, իսկ ամենացածր տեղեկացվածությունը՝ Էրեբունի ՎՇ-ում՝ 44,5%: Ընդհանուր հարցվողների 58,5%-տեղյակ է թե ով է կառավարում իրենց շենքը:

Գծապատկեր 12. Բազմաբնակարան շենքը կառավարող մարմնի վերաբերյալ տեղեկացվածություն




Հարցվողների 85,3%-ի կողմից որպես շենքի կառավարող մարմին նշվել է համատիրությունը, 8,4%-ի՝ լիազորագրային կառավարիչը, 1,1%-ի՝ հավատարմագրային կառավարիչը (Գծապատկեր 13):

Գծապատկեր 13. Բազմաբնակարան շենքը կառավարող մարմինը




Գծապատկեր 14-ում ներկայացված է, թե ըստ հարցվողների ինչ աշխատանքներ են իրականացվել/իրականացվում բազմաբնակարան շենքը կառավարող մարմնի կողմից վերջին 3 տարիների ընթացքում: Հարցվողների 34,5%-ը նշել է շենքի մաքրություն, 71,3%-ը՝ բակային տարածքի մաքրում, 51,6%-ը՝ բակային տարածքի լուսավորություն, 29,2%-ը՝ մուտքերի վերանորոգում, 12,5%-ը՝ աստիճանավանդակների նորոգում, 20,2%-ը՝ վերելակների նորոգում, 3,8%-ը՝ շենքի ջերմամեկուսացում, 6,1%-ը՝ մուտքի ջերմամեկուսացում, 12,9%-ը՝ տանիքի վերանորոգում:

Գծապատկեր 14. Բազմաբնակարան շենքը կառավարող մարմնի կողմից վերջին 3 տարիների ընթացքում իրականացվող աշխատանքներ




Համաձայն Գծապատկեր 15-ի, հարցվողների մեծամասնությունը տեղեկացված չէ բազմաբնակարան շենքի կառավարչի գործառույթների մասին: Ընդհանրապես տեղեկացված չեն հարցվողների 50,4%-ը, ավելի շուտ տեղեկացված չեն՝ 14,3%-ը:

Գծապատկեր 15. Բազմաբնակարան շենքի համատիրության (կառավարչի) գործառույթների մասին տեղեկացվածությունը




Հարցվողների 5,1%-ը լիովին դրական է գնահատել շենքի կառավարչի աշխատանքը, 28,5%-ը՝ ավելի շուտ դրական, 19,6%-ը՝ ավելի շուտ բացասական, 27,1%-ը՝ ընդհանրապես բացասական: Հարցվողների 19,8%-ը դժվարացել է որևէ գնահատական տալ, ինչը վկայում է այս կառույցի մասին տեղեկացվածության պակասի մասին:

Գծապատկեր 16. Բազմաբնակարան շենքի համատիրության (կառավարչի) աշխատանքի գնահատում




Գծապատկեր 17-ից կարելի է դատել, որ համատիրություն-սեփականատեր կապը բավականին թույլ է: Հարցվողների միայն 7,6%-ն է նշել, որ համատիրությունը սեփականատերերին տեղեկացնում է նախատեսվող աշխատանքների մասին, 16,3%-ը նշել է, որ մասամբ են տեղեկացնում նախատեսվող աշխատանքների մասին:

Գծապատկեր 17. Բազմաբնակարան շենքը կառավարող մարմնի կողմից սեփականատերերին պլանավորվող/ նախատեսվող աշխատանքների մասին տեղեկատվության տրամադրում




Հարցվողների գրեթե կեսը 46,4%-ը, նախընտրում է, որ բազմաբնակարան շենքի կառավարող մարմնի կողմից իրականացվող աշխատանքները փակցվեն շենքում կամ վերելակում, 30,2%-ը նախընտրում է, որպեսզի հանդիպումների միջոցով տեղեկանան աշխատանքների մասին, 9,9%-ը նշել է թուուցիկների միջոցով:

Գծապատկեր 18. Բազմաբնակարան շենքը կառավարող մարմնի աշխատանքների մասին նախընտրելի տեղեկատվության աղբյուրները




Բնակարանի սեփականատերերի մասնակցությունը շենքի կառավարման գործընթացում բարձրացնելու միջոց հարցվողների 34,4%-ը նշել է բնակարանների սեփականատերերի հետ ամսական կամ եռամսյակային կտրվածքով իրականացվող հանդիպում/քննարկումներ, 32,9%-ը՝ պարբերաբար հարցումների իրականացում բնակիչների խնդիրները հասկանալու նպատակով, 21,5%-ը ցանկանում է տեղեկացված լինել աշխատանքների վերաբերյալ, 13,2%-ը նշել է հաշվետվողականության բարձրացում: Այս արդյունքները ցույց են տալիս, որ բնակիչների մեծամասնությունը ցանկանում է ներգրավված լինել շենքի հետ կապված գործընթացներում, թե կառավարման գործընթացում, թե տեղեկացված լինելու տեսանկյունից:

Գծապատկեր 19. Բնակարանի սեփականատերերի մասնակցությունը շենքի կառավարման գործընթացում բարձրացնելու միջոցները




Համաձայն հետազոտության արդյունքների, հարցվողների 7,9%-ն է միայն մասնակցել համատիրության ժողովներին, 70,1%-ը նշել է, որ չի մասնակցել, քանի որ տեղեկացված չի եղել, 18,4%-ը՝ չի մասնակցել ցանկություն չունենալու պատճառով:

Գծապատկեր 20. Համատիրության ժողովներին երբևէ մասնակցություն




Այն հարցվողները, ովքեր մասնակցել են ժողովներին, նշել են նաև քննարկման թեման: 37,6%-ը նշել է մուտքերի վերանորոգում, 29,8%-ը՝ վերելակները, 24,8%-ը՝ շենքի բարեկարգում, 7,8%-ի դեպքում թեման եղել է ընտրությունները:

Գծապատկեր 21. Համատիրության ժողովների քննարկման թեման




Համաձայն հարցման արդյունքների հարցվողների կեսից ավելին՝ 54,9%-ը նշել է, որ յուրաքանչյուր ամիս կցանկանա տեսնել բազմաբնակարան շենքը կառավարող համատիրության աշխատանքների հետ կապված հաշվետվություն: Ամենաբարձր ցանկությունը հայտնել են Դավիթաշեն ՎՇ-ի հարցվողները՝ 70,0% և Էրեբունի ՎՇ-ի հարցվողները՝ 61,0%:

Գծապատկեր 22. Բազմաբնակարան շենքեր կառավարող համատիրության աշխատանքների հետ կապված յուրաքանչյուր ամիս հաշվետվություն ստանալու ցանկություն




Հարցվողների կեսից ավելին՝ 53,0%-ը նշել է, որ տեղյակ է թե որքան գումար է վճարում շենքի պահպանման և այլ մատուցվող ծառայությունների համար: Առավել բարձր տեղեկացվածություն է Ավան ՎՇ-ում՝ 75,6% և Մալաթիա Սեբաստիա ՎՇ-ում 60,6%: Ամենացածր տեղեկացվածությունը Նոր Նորք ՎՇ-ում է՝ 41,4%:

Գծապատկեր 23. Շենքի պահպանման և այլ մատուցվող ծառայությունների համար նախատեսված վճարի չափի իմացությունը




Այն հարցվողներին, ովքեր նշել են, որ գիտեն թե որքան գումար են վճարում շենքի պահպանման և այլ մատուցվող ծառայությունների համար, հարց է տրվել այն մասին, թե արդյոք տեղյակ են թե ինչպես է հաշվարկվում այդ գումարը: Հարցվողների մեծամասնությունը՝ 71,4%-ը նշել է, որ տեղյակ չէ գումարի հաշվարկման եղանակից: Առավել ցածր տեղեկացվածություն է գրանցվել Նուբարաշեն ՎՇ-ում, առավել բարձր տեղեկացվածություն՝ Ավան ՎՇ-ում:

Գծապատկեր 24. Շենքի պահպանման և այլ մատուցվող ծառայությունների համար նախատեսված գումարի հաշվարկման եղանակը




Հարցվողների 52,1%-ին բավարարում է վճարի վճարման ձևը: Վճարման ձևը առավել շատ դուր չի գալիս Դավթաշեն ՎՇ-ի հարցվողներին՝ 37,1% (Գծապատկեր 25):

Գծապատկեր 25. Վճարման ձևով բավարարվածությունը




Հարցվողների մեծամասնությունը՝ 62,3%-ը նշել է, որ վճարի փաստի հավաստման նպատակով տրվող փաստաթուղթը բավարարում է:

Գծապատկեր 26. Վճարի փաստի հավաստման նպատակով տրվող փաստաթղթով բավարարվածությունը




Հարցվողների միայն 2,8%-ն է ամբողջությամբ տեղեկացված, թե ինչ նպատակներով է ծախսվում հավաքված գումարը, 10,3%-ը նշել է, որ մասամբ է տեղեկացված: Այս ցուցանիշը ևս վկայում է այն մասին, որ բավականին ցածր է բնակիչ-կառավարիչ կապը բոլոր տեսանկյուններից, քանի որ բնակիչները և իրազեկված չեն կառավարչի գործունեությունից, և չգիտեն թե ինչպես են ծախսվում իրենց կողմից վճարվող գումարները:

Գծապատկեր 27. Գումարի ծախսման նպատակներով տեղեկացվածությունը



Ինչ ուղղությամբ իրականացվող աշխատանքներն են կարևորում հարցվողները՝ 46,2%-ը նշել է շենքի մաքրություն, 39,6%-ը մուտքի վերանորոգում, 29,9%, բակային տարածքի կանաչապատում՝ 28,1%, տանիքի վերանորոգում՝ 27,9%, աստիճանավանդակների նորոգում՝ 27,6%, վերելակների նորոգում՝ 27,4% (Գծապատկեր 28) :

Գծապատկեր 28. Աշխատանքներ, որոնց պետք է ուշադրություն դարձնի շենքի կառավարման մարմինը




4. Ջեռուցում, էլեկտրական սարքավորումներ

4.1. Ջեռուցումը տնային տնտեսություններում

Համաձայն ՀՀ ԱՎԾ⁴ 2011թ. մարդահամարի տվյալների Երևան քաղաքում ջեռուցվում են գրեթե բոլոր SS-ները, ընդհանրապես չեն ջեռուցվում SS-ների 2,8%-ը:

Ըստ սույն հետազոտության արդյունքների 2017-2018թ.-ն հարցված SS-ները ամբողջությամբ ջեռուցել են հարցվողների 57,1%-ը, մասնակի՝ 40,0%-ը, չեն ջեռուցել՝ 3,0%-ը: Ըստ վարչական տարածքների ներկայացված է Գծապատկեր 29-ում:


Գծապատկեր 29. SS-ի ջեռուցվող տարածքը



Գծապատկեր 30-ում կարելի է, տեսնել, որ բազմաբնակարան շենքերում SS-ների 57,7%-ը և առանձնատներում 53,6%-ը ջեռուցումն իրականացնում է ամբողջությամբ:

⁴ <http://armstat.am/file/doc/99483888.pdf>


Գծապատկեր 30. SS-ի ջեռուցվող տարածքը ըստ շինության տիպի



Ըստ ՀՀ ԱՎԾ⁵ 2011թ. մարդահամարի տվյալների, Երևան քաղաքում SS-ների ջեռուցման հիմնական միջոցն է հանդիսանում բնական գազը, այնուհետև էլեկտրաէներգիան:

Համաձայն հետազոտության արդյունքների, SS-ների 70,7%-ը ջեռուցման հիմնական աղբյուրը բնական գազն է, 25%-ի դեպքում՝ էլեկտրաէներգիան, 3,5%՝ վառելափայտ: Այն հարցվողները, ովքեր կիրառում են նաև երկրորդային աղբյուր⁶, որպես երկրորդային աղբյուր առաջին հերթին նշել են էլեկտրաէներգիա՝ 61%, բնական գազ՝ 15%, վառելափայտ և ածուխ՝ 5-ական տոկոս, հեղուկ գազ և նավթ կամ դիզելային վառելիք՝ 6-ական տոկոս (Գծապատկեր 31):

Գծապատկեր 31. Ջեռուցման հիմնական տարբերակները (էներգիայի աղբյուրը)




⁵ <http://armstat.am/file/doc/99483888.pdf>

⁶ 31 Ընդհանուր SS-ների 16%-ը


Որպես հիմնական ջեռուցման միջոց անհատական ջեռուցման կաթսա կիրառում են հարցված SS-ների 53,2%-ում, գազի վառարան՝ 22,4%, էլեկտրական վառարան, 17,8%: Ջեռուցման նպատակով օդորակիչն օգտագործվում է որպես երկրորդային միջոց՝ հարցված SS-ների 12,3%-ի դեպքում (Գծապատկեր 32):

Գծապատկեր 32. Ջեռուցման համար օգտագործվող սարքավորումները




Ըստ գնահատականների ջեռուցման 2017-2018թթ. սեզոնին SS-ների 34,9%-ում տան միջին ջերմաստիճանը կազմել է 19-20 աստիճան, 24,5%-ում՝ 17-18 աստիճան, իսկ SS-ների 8,3%-ում ջերմաստիճանը գերազանցել է 23 աստիճան (Գծապատկեր 33):

Գծապատկեր 33. Միջին ջերմաստիճանի գնահատականներ




Հարցված SS-ների 34,8%-ում լիովին բավարարված են ստացված ջերմաստիճանով, 35,0%-ում ավելի շուտ բավարարված են, իսկ 30% բավարարված չէ :

Գծապատկեր 35. Բավարարվածությունը ստացված ջերմաստիճանով



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2017-2018թ.-ը. բավականին մեղմ էր, հարցվողներին խնդրել ենք նշել նաև ջեռուցման համար ծախսվող միջին ամսական գումարի չափը նաև նախորդ ջեռուցման սեզոնի՝ 2016-2017թ.-ի համար: Ինչպես տեսնում ենք, ծախսված գումարները զգալի տարբերվում են երկու սեզոններում: Մասնավորապես 2016-2017թ.-ին 50001-80000 դրամ ծախսել է ՏՏ-ների 22,0%-ը , իսկ 2017-2018թ.-ին նույն գումարը ծախսել է միայն 9,8%-ը: Հարցվողների կեսից ավելին 2017-2018թ.-ին ամսական կտրվածքով ծախսել են մինչև 30000 դրամ ջեռուցումը կազմակերպելու համար, իսկ 2016-2017 թթ.-ին 27%-ն է ծախսել մինչև 30000 դրամ ջեռուցման կազմակերպման համար:


Գծապատկեր 36. Ջեռուցման համար ծախսված գումարը ամսական կտրվածքով 2016-2017թ.-ի և 2017-2018թ.-ի համար



4.2. Էլեկտրական սարքավորումներ, էներգաարդյունավետություն խնդիրներ


Գրեթե բոլոր SS-ներում առկա են հեռուստացույց՝ 98,6%, սառնարան՝ 97,7% և լվացքի մեքենա՝ 93,8%: Փոշեկուլ ունեն SS-ների 84,7%-ում, համակարգիչ՝ 74,3%-ում, միկրոալիքային վառարան՝ 34,4%, օդորակիչ՝ 20,4%:

Գծապատկեր 37. SS-ներում առկա էլեկտրական սարքավորումները



Հարցվողներից կեսից ավելին սարքավորումներ գնելիս ընդհանրապես ուշադրություն չի դարձրել էներգաարդյունավետության պիտակների ABC դասակարգմանը: Ընդհանուր հարցվողների մոտ 16%-ն ընդհանրապես տեղյակ չէ այդ դասակարգման վերաբերյալ: Այս դասակարգմանը առավել շատ ուշադրություն են դարձրել սպասք լվացող մեքենա գնողները՝ 33,3%:


Գծապատկեր 38. Սարքավորումներ գնելիս էներգաարդյունավետության ABC դասակարգման կարևորությունը



4.3. Այլընտրանքային էներգիայի աղբյուրները. Ֆինանսական մասնակցության պատրաստակամությունը


Շենքում ֆոտովոլտային համակարգի տեղադրման ցանկություն հայտնել են հարցվողների կեսից ավելին: 49,6% SS-ներում շատ կցանկանան որպեսզի իրենց շենքի տանիքում տեղադրվի ֆոտովոլտային համակարգ, 10,7% -ը՝ ընդհանրապես չի ցանկանա:

Գծապատկեր 39. Շենքի տանիքում ֆոտովոլտային համակարգի տեղադրման ցանկություն (օգտագործվել է 1-ից 7 բալային սանդղակ, որտեղ որտեղ 1-ը նշանակում է ընդհանրապես չէիք ցանկանա, 7-ը՝ շատ կցանկանաք)




Հարցվողների 31,3%-ը նշել է, որ պատրաստ է վճարելու որոշակի գումար, 14,5%-ը ցանկություն ունի վճարելու, սակայն հնարավորություն չունի, 23,7%-ը ցանկություն չունի վճարելու:

Գծապատկեր 40. Երևանի քաղաքապետարանի հետ համատեղ համաֆինանսավորում իրականացնելու դեպքում ամսական գումար վճարելու պատրաստակամությունը




Այն հարցվողները, ովքեր պատրաստակամություն են հայտնել վճարելու, նշել են նաև թե որքան գումար են պատրաստ վճարել: Հարցվողների 74,5%-ը նշել է, որ կարող է վճարել մինչև 10000 դրամ, 8,9%-ը՝ 10001-30000 դրամ, 5,5%-ը՝ 30 001 դրամ և ավելի (Գծապատկեր 41):

Գծապատկեր 41. Վճարվող գումարի չափը




Ընդհանուր ՏՏ-ների միայն 28,8%-ն է պատրաստ գումար տրամադրել շենքի պատող կոնստրուկցիաների մեկուսացման համար: Առավել մեծ պատրաստակամություն հայտնել են Նոր Նորք՝ 37,5% և Աջափնյակ ՎՇ-երում: Առավել քիչ պատրաստ են գումար տրամադրել Կենտրոն ՎՇ-ում՝ 17,6%:

Գծապատկեր 42. Շենքի պատող կոնստրուկցիաների /օրինակ պատեր, տանիք, պատուհաններ, արտաքին դռներ/ ջերմամեկուսացման համար գումար տրամադրելու պատրաստակամությունը




Հարցվողների 56,4%-ը պատրաստ է գումար տրամադրել պատերի համար, 40,9%-ը՝ պատուհանների, 37,2%-ը՝ արտաքին դռների, 27,9%-ը՝ տանիքի համար: Հարկ է նշել, որ տանիքի համար գումար տրամադրողները հիմնականում վերին հարկերում բնակվող հարցվողներն են:

Գծապատկեր 43. Որ կոնստրուկցիաների համար են պատրաստ գումար տրամադրել




Էներգաարդյունավետության ծրագրի համար հարցվողների 48,6%-ը պատրաստ է է վճարել մինչև 10,000 դրամ, 14%-ը 10,001-30,000 դրամ, 6,5%-ը՝ 30,001 դրամ և ավելի:

Գծապատկեր 44. Էներգաարդյունավետության ծրագրի համար որքան գումար են պատրաստ ներդնել




Շենքի անհապաղ աշխատանքների ֆինանսավորման համար կուտակային ֆոնդ ստեղծելու ցանկություն են հայտնել հարցված ՏՏ-ների 27,7%-ում: Առավել մեծ ցանկություն են հայտնել Էրեբունի ՎՇ-ում՝ 34,8%, առավել քիչ՝ 22,0%-Քանաքեռ-Զեյթուն ՎՇ-ում:

Գծապատկեր 45. Շենքի անհապաղ աշխատանքների ֆինանսավորման համար կուտակային ֆոնդ ստեղծելու ցանկությունը




Հարցված ՏՏ-ների 46,3%-ը նշել է, որ կցանկանար կուտակային ֆոնդը ստեղծվելը սպասարկման վճարի 10%-ի չափով, 18,1%-ը՝ սպասարկման վճարի 20%-ի չափով, 6,4%-ը՝ սպասարկման վճարի 30%-ի չափով:

Գծապատկեր 46. Կուտակային ֆոնդի չափը



Հարցված ՏՏ-ների մեծամասնությունը՝ 79,4%-ը չի ցանկանում որպեսզի համատիրությունը վարկ ձեռք բերի շենքի բարելավման և արդիականացման համար: Առավել շատ դեմ են արտահայտվել Ավան, Աջափնյակ, Արաբկիր և Նուբարաշեն ՎՇ-երում (Գծապատկեր 47):


Գծապատկեր 47. Շենքի բարելավման և արդիականացման համար համատիրության կողմից վարկ ձեռք բերելու հարցվողների կարծիքը



4.4. Լուսավորության կազմակերպումը SS-ներում


Համաձայն հետազոտության արդյունքների, քաղաք Երևանում լուսավորության կազմակերպման համար հիմնականում օգտագործվում են շիկացման լամպեր: Հարցված SS-ների 52,0%-ում կիրառում են բացառապես շիկացման լամպեր, 13,3%-ում Էներգաարդյունավետ լամպեր, այդ թվում լյումինեսցենսային և լուսադիոդային, 34,7% SS-ներում կիրառում լուսավորության խառը տարբերակներ:

Գծապատկեր 48. Լուսավորության կազմակերպման տարբերակները



Գծապատկեր 49-ում ներկայացված են Երևան քաղաքի SS-ներում առկա բոլոր լամպերի ընդհանուր բաշխվածությունը: SS-ներում առկա լամպերի 61,7%-ը շիկացման լամպեր են, 3,5%-ը՝ հալոգենային շիկացման, 12,0%-ը՝ լյումինեսցենսային, 22,8%-ը՝ լուսադիոդային (ԼԵԴ):

Գծապատկեր 49. SS-ներում առկա ընդհանուր լամպերի բաշխվածությունը ըստ տեսակների




Լուսավորության համար էներգիայի սպառման մանրամասները բերված են Աղյուսակ- 2--ում

Աղյուսակ 2---. Լուսավորության տարբեր լամպերի օգտագործման ցուցանիշներ

SS-ների ընդհանուր քանակ, հատ	2098
1 SS-ում լամպերի ընդհանուր միջին քանակ, հատ	12,4
1 օրում 1 լամպի օգտագործման տևողությունը, ժամ	3,37
1 լամպի միջին հզորությունը՝ շիկացման լամպերի համար, Վտ	72,6
1 լամպի միջին հզորությունը՝ շիկացման հալոգենային լամպերի համար, Վտ	53,55
1 լամպի միջին հզորությունը՝ լյումինեսցենտ լամպերի համար, Վտ	32,4
1 լամպի միջին հզորությունը՝ լուսադիոդային լամպերի համար, Վտ	7,2
Շիկացման լամպերի մասնաբաժինը 1 պայմանական SS-ան լամպերի ընդհանուր քանակության մեջ, %	61,7%
Շիկացման հալոգենային լամպերի մասնաբաժինը 1 պայմանական SS-ան լամպերի ընդհանուր քանակության մեջ, %	3,5%
Լյումինեսցենտ լամպերի մասնաբաժինը 1 պայմանական SS-ան լամպերի ընդհանուր քանակության մեջ, %	12,0%
Լուսադիոդային լամպերի լամպերի քանակությունը 1 SS-ան լամպերի ընդհանուր քանակության մեջ, %	22,8%
Ընդամենը լուսավորության դիմաց 1 օրում 1 պայմանական SS-ում սպառվող էլեկտրական էներգիա, Վտժ	1983


Հարցված SS-ների 66,9%-ում տեղյակ են ԼԵԴ լուսավորության մասին, 12,9%-ը միայն լսել է ԼԵԴ լուսավորության մասին, 20,3%-ում ընդհանրապես տեղյակ չեն:

Գծապատկեր 50. Լուսադիոդային (ԼԵԴ) լուսավորության մասին տեղեկացվածությունը




Հարցվողների կեսը՝ 50,0%-ը լուսադիոդային լամպերի (ԼԵԴ) գլխավոր առավելությունը նշել են, այն, որ սովորական լամպերի համեմատ վերջիններս օգտագործման երկարաժամկետ ինայտություններ են ապահովում, 18,7%-ը՝ շահագործման երկար ժամկետ, 14,5%-ը՝ բարձր արդյունավետություն, 28,7%-ը չի կարողացել նշի ոչ մի առավելություն (Գծապատկեր 51):

Գծապատկեր 51. Լուսադիտային լամպերի (ԼԵՂ) առավելությունները




ԼԵՂ լամպերի գլխավոր թերությունը հարցվողները համարում են թանկությունը՝ 19,9%: Հարցվողների կեսից ավելին չեն կարողացել նշեն ոչ մի թերություն:

Գծապատկեր 52. Լուսադիտային (ԼԵՂ) լուսավորության թերությունները




ԼԵՂ լամպերի միջոցով լուսավորության մասին հարցվողների 44,8%-ը տեղեկացել է շրջապատից՝ բարեկամներից, ընկերներից, ծանոթներից և այլն: 21,4%-ը նշել է, որ վաճառասրահում, խանութներում են առաջարկել ԼԵՂ լամպեր, 13,0%-ը հեռուստացույցից է տեղեկատվություն ստացել, 7,3%-ը՝ ինտերնետից (Գծապատկեր 53):

Գծապատկեր 53. Լուսադիտդային (ԼԵԴ) լամպերի վերաբերյալ ինֆորմացիայի ստացման աղբյուրները




Հարցվողների 22,2%-ը ինֆորմացիայի ստացման վստահելի աղբյուր համարում է հեռուստացույցը, 18,1%-ը՝ ինտերնետը, 16,9%-ը՝ շրջապատը՝ բարեկամներ, ծանոթներ:

Գծապատկեր 54. Ինֆորմացիայի ստացման վստահելի աղբյուրը




Լուսավորության ԼԵԴ տարբերակին չանցնելու գլխավոր պատճառը թանկությունն է, որը նշվել է հարցվողների 22,1%-ի կողմից, առավելությունների մասին իրազեկվածության պակաս կա հարցվողների 7,4%-ի մոտ, կարիք կամ անհրաժեշտություն չկա հարցվողների 7,1%-ի մոտ: ՏՏ-ների 38,7%-ում ամբողջությամբ կամ մասնակիորեն կիրառում են ԼԵԴ լուսավորություն:

Գծապատկեր 55. Լուսավորության ԼԵԴ տարբերակին չանցնելու պատճառները



Հարցվողների 29,7%-ը նշել է , որ պատրաստ են 1 էներգաարդյունավետ լամպի համար վճարել 500 դրամ, 12,4%-ը՝ 501-800 դրամ, 16,2%-ը՝ 801-1500 դրամ, 6,1%-ը՝ 1501-2500 դրամ:

Գծապատկեր 56. ԼԵԴ լամպի համար վճարվող գումարի չափը



5. Քաղաքային ծառայություններ


5.1. Հասարակական տրանսպորտ

Համաձայն Երևանի քաղաքապետարանի տարածած հաղորդագրության, փոփոխության է ենթարկվում Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի ցանցը:

Գծապատկեր 57-ում ներկայացված է, թե ինչպես են հարցվողները գնահատում ներկայիս հասարակական տրանսպորտի՝ ավտոբուսների և երթուղային տաքսիների վիճակը: Ինչպես տեսնում ենք՝ նշված 4 չափանիշներով երթուղային տաքսիներին տրվել է բավականին ցածր գնահատական, մասնավորապես Ծանրաբեռնվածությունը՝ 1,8, Տեխնիկական վիճակ՝ 1,9, Չվացուցակ՝ 2,5, Միայն կանգառներում կայանելը՝ 3,0: Ավտոբուսների պարագայում՝ ծանրաբեռնվածությունը՝ 2,3, Տեխնիկական վիճակ՝ 2,6, Չվացուցակ՝ 2,7, Միայն կանգառներում կայանելը՝ 3,5:

Գծապատկեր 57. Երևան քաղաքի հասարակական տրանսպորտը՝ ավտոբուսների, երթուղային տաքսիների գնահատում 1-ից 5 բալային սանդղակով, որտեղ 1-ը նվազագույն, 5-ը առավելագույն գնահատականն է

(Գծապատկերում ներկայացված է միջին գնահատականը)




Աշխարհի զարգացած երկրներում հսկայական ներդրումներ են կատարվում էլեկտրատրանսպորտի զարգացման ուղղությամբ: Այն ունի մի շարք առավելություններ՝ անվտանգ է, արագընթաց, հարմարավետ, մատչելի, և ամենակարևորը՝ էկոլոգիապես մաքուր է:

Ըստ Երևանի քաղաքապետարանի տարածած հաղորդագրության, հաշվի առնելով քաղաքային վերգետնյա էլեկտրատրանսպորտի դերը ներքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումների ընդհանուր գործընթացում, այդ թվում բնապահպանական

խնդիրների տեսանկյունից և կարևորելով դրա հետագա զարգացման անհրաժեշտությունը, որոշակի աշխատանքներ են կատարվում վերգետնյա էլեկտրատրանսպորտի շարժակազմի, հպակային և մալուխային ցանցերի, քարշի ենթակայանների նորոգման, հպակային ցանցի որոշակի նոր հատվածներ կառուցելու, տրոլեյբուսային տնտեսության արտադրական շենքերի վերանորոգման և վերազինման, ինչպես նաև տրոլեյբուսների շահագործման արդյունավետության մեծացման նպատակով:


Ըստ հարցման արդյունքների, հարցվողների 68,3%-ը ընդհանրապես չի օգտվում տրոլեյբուսներից, 16,0%-ը ամիսը 1 անգամ է օգտվում տրոլեյբուսից:

Գծապատկեր 58. Վերգետնյա էլեկտրատրանսպորտից /տրոլեյբուսից/ օգտվելու հաճախականությունը




Տրոլեյբուսներից չօգտվելու հիմնական պատճառը հարմար երթուղու բացակայությունն է, որը նշվել է հարցվողների 47,4%-ի կողմից: Հարցվողների 17,3%-ը նշել է, որ չի օգտվում քանի որ ունի սեփական ավտոմեքենա, 15,8%-ը նշել է, որ հարմարավետ չէ, 9,1%-ը նշել է, որ ժամային առումով հարմար չէ, հազվադեպ է հանդիպում, 3,2%-ը նշել է դանդաղ է ընթանում:

Գծապատկեր 59. Վերգետնյա էլեկտրատրանսպորտից /տրոլեյբուսից/ չօգտվելու պատճառները




Մետրոյից չեն օգտվում հարցվողների 58,0%-ը: Հարցվողների գրեթե 3,1%-ը մետրոյից օգտվում է ամեն օր, 5,4%-ը՝ շաբաթը 2-3 անգամ, 5,5%-ը՝ շաբաթը 1 անգամ, 20,4%-ը՝ ամիսը 1 անգամ:

Գծապատկեր 60. Ստորգետնյա էլեկտրատրանսպորտից /մետրոյից/ օգտվելու հաճախականությունը




Մետրոյից չօգտվելու գլխավոր պատճառը ՎՇ-ում մետրոյի բացակայությունն է՝ 52,9%: Հարցվողների 14,3%-ը նշել է, որ հարմարավետ չէ:

Գծապատկեր 61. Ստորգետնյա էլեկտրատրանսպորտից /մետրոյից/ չօգտվելու պատճառները




